ԻՐԱԶԵԿՈՒՄ ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

06.12.2017 14:29

ՀՀ ոստիկանության պետը դիմել էր ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ Մուշեղ Շուշանյանի կողմից հրապարակային վիրավորական արտահայտություններ կատարելու վարքագիծը քննարկման առարկա դարձնելու համար: Դիմողը նշել էր, որ փաստաբանի նմանօրինակ անպատասխանատու և ոչ պրոֆեսիոնալ գործելաոճը ուղղակիորեն վնասում է իրավապահ ամբողջ համակարգի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը և որևէ աղերս չունի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման հետ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը Մուշեղ Շուշանյանի նկատմամբ հարուցել էր կարգապահական վարույթ, որոշման մեջ նշելով հետևյալը՝

«Փաստաբան Մուշեղ Շուշանյանի հրապարակային խոսքերում կան մտքեր, որոնք ոստիկանության հասցեին քննադատություն են պարունակում և կարող են տեղավորվել փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման համատեքստում: Մասնավորապես՝ փաստաբան Մուշեղ Շուշանյանը նշել է՝ «Ոստիկանական գործողությունները, որ իրականացվեցին «Սասնա ծռեր»-ի գործով դատավարության ժամանակ դատարանի շենքի մոտ, ես ոստիկանության հատուկ գործողություն եմ որակում: Որովհետև ակնհայտ սադրիչ գործողությունների էին դիմում, այսինքն՝ առանձին ոստիկաններ հայհոյում էին «Սասնա ծռեր»-ի հարազատներին, համակիրներին: Ամեն ինչ արվում էր, որ բախումներ հրահրվեն: Պարզ է, որ եթե ոստիկանությունը նպատակ ուներ դիմելու սադրանքի, իրենք իրենց նպատակին հասան»:

Փաստաբանը չի կարող վախենալ կամ մտահոգվել իր վստահորդին պաշտպանելու նպատակով սուր քննադատական խոսք կամ «մեղադրանքներ» հնչեցնելու համար, քանի որ իր դիրքորոշման և առաջ քաշած փաստերի ստուգման միջոցով պետք է պարզվի իրականությունը: Սկզբնական փուլում, երբ հասարակությանը կամ իրավասու մարմնին հայտնի չեն դեպքի իրական փաստերը, բնական է, որ վեճի (միջադեպի) հակառակորդ կողմերի դիրքորոշումները հակասելու են միմյանց:

Այնուհանդերձ, փաստաբանը պարտավոր է ղեկավարվել Կանոնագրքի պահանջներով և սուր քննադատություններից չանցնել վիրավորանքների:

Փաստաբան Մուշեղ Շուշանյանի քննադատական խոսքերից բացի առկա են նաև արտահայտություններ, որոնք փաստաբանի կողմից կատարված լինելը հաստատվելու դեպքում կարող են հակասել վերոհիշյալ կանոններին: Մասնավորապես վերջինս նշել է՝ «...Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունն իրավապահ մարմին չէ, զինված հրոսակախումբ է, որը պատրաստ է կատարել ցանկացած հանցավոր հրաման...»:

Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նաև արձանագրվել է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

2017թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը քննության առնելով Մուշեղ Շուշանյանին պատասխանատվության ենթարկելու հարցը, որոշել է՝

1. Փաստաբան Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր թիվ 387) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5–րդ մասի պահանջի խախտման հիմքով հարուցված թիվ 17048 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր թիվ 387) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր թիվ 387) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 6 ամսվա ընթացքում 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը լրացուցիչ կհրապարակվի:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })